8. Ակադեմիական փոխճանաչման և շարժունակության ազգային տեղեկատվական կենտրոնի պաշտոնական կայք, https://armenic.am

ЖОРА СТЕПАНЯН
Анализ и управление рынка ценных бумаг, магистратура, 2-ой курс

ИЗМЕНЕНИЕ УРОВНЯ ПРИЕМА В ВЫСШИЕ УЧЕБНЫЕ ЗАВЕДЕНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ключевые слова: *высшее образование, коэффициент приема, государственные и частные вузы, школы, выпускники*

Образование имеет решающее значение в контексте социально-экономического развития страны. За последние три десятилетия сфера образования и высшее образование в Республике Армения претерпели множество реформ. Изменения в приеме в вузы приводят не только к изменению качества образования, но и влияют на экономическую ситуацию в стране. В исследовании рассматриваются изменения показателей приема в вузы Армении, факторы, обусловившие эти изменения. Выявлены проблемы в системе высшего образования Армении и пути их решения.

ZHORA STEPANYAN
Securities Market Analysis and Management, Master Degree, 2nd Year

CHANGE OF ADMISSION LEVEL IN HIGHER EDUCATION INSTITUTIONS IN THE REPUBLIC OF ARMENIA

Key words: *higher education, admission rates, public and private universities, schools, graduates*

Education is vital in the context of a country's socio-economic development. During the last three decades the education sphere and higher education in the Republic of Armenia have faced many reforms. The changes in university admission lead not only to the changes in the quality of education but they also affect the economic situation in the country. The research covers the changes in Armenian universities admission rates, the factors leading to the changes. Issues in the Armenian higher education system have been revealed with their possible solutions.

ԹԵՐԵԶԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Տնտեսագիտություն, բակալավրիատ, 2-րդ կուրս

«ՍԵՎ ԿԱՐԱՊԻ» ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Հիմնաբառեր. *«սև կարապ», անկանխատեսելի, անակնկալ իրադարձություն, կորոնավիրուս, կենսամակարդակ, մակրոտնտեսական ցուցանիշներ*

Ժամանակակից աշխարհում տնտեսությունն ավելի ու ավելի հաճախ է բախվում «ծայրահեղ հազվադեպությամբ» բնութագրվող անկանխատեսելի երևույթների հետ, որոնք առաջ են բերում տնտեսական ուժգին տատանումներ ու ծանր տնտեսական ճգնաժամերի պատճառ դառնում: Փորձագետի համար ի սկզբանե անկանխատեսելի իրադարձությունները, որոնք հետադարձ հայացքով ակնհայտ, բացատրելի ու սպասելի լինելու պատրանք են ստեղծում և նշանակալի հետևանք թողնում մակրոտնտեսական վիճակը բնութագրող բոլոր հիմնարարների ու ցուցանիշների վրա, բնութագրում են մի երևույթ, որը մասնագիտական գրականության մեջ հայտնի է «սև կարապ» եզրույթով: Համաշխարհային տնտեսության համար «սև կարապի» ժամանակակից օրինակ է 2020 թ. սկզբին աշխարհում բռնկված COVID-19 համաճարակը, իսկ ՀՀ-ի համար՝ նաև 44-օրյա պատերազմը:

Ներածություն: Ամերիկացի ֆինանսիստ Նասիմ Թալեբը, որն ուսումնասիրում է, թե ինչպես են անկանխատեսելի իրադարձություններն ազդում տնտեսության և մեր ամենօրյա կյանքի վրա, իր «Սև կարապ. Անկանխատեսելիության նշանի ներքո» աշխատության մեջ[1] «սև կարապներ» է անվանել զարգացումն ու առաջընթացը խթանող պատահական, անոմալ, ազդեցության հսկայական ուժ ունեցող, անհավանական ու անկանխատեսելի երևույթներն ու իրադարձությունները, որոնց, սակայն, մարդկությունը պետք է մշտապես պատրաստ լինի:

Ժամանակակից մասնագիտական գրականության մեջ «սև կարապներ» են համարվում և՛ բացասական, և՛ դրական անկանխատեսելի իրադարձությունները, որոնց անխուսափելի լինելու հանգամանքներն ու իրականանալու նախադրյալները հեշտությամբ ներկայացվում են փորձագետների կողմից, բայց միայն՝ հետահայաց, այն դեպքում, երբ այդ իրադարձություններն արդեն տեղի են ունեցել: Նման իրադարձություններ են նշանակալի գիտական հայտնագործությունները, պատմական և քաղաքական դեպքերը, արվեստի և մշակույթի նվաճումները, աղետներն ու կատակլիզմները, ինչպես օրինակ՝ համացանցի զարգացումը, պատերազմները, ԽՍՀՄ-ի փլուզումը, սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը, համաշխարհային տնտեսական ճգնաժամը, կորոնավիրուսային համաճարակը: Վերջինս ակնառու դարձրեց գլոբալ աշխարհի խոցելիությունը, երկրները մեկուսացան, տնտեսությունները տուժեցին, իսկ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) հանդես եկավ հակասական հանձնարարականներով:

Իրադարձությունը կարելի է համարել «սև կարապ», եթե այն, փորձագետ-վերլուծաբանների դիտարկմամբ, անկանխատեսելի, անսպասելի ու հազվադեպ երևույթ է, իրականություն դառնալու տեսանկյունից անհավանական և տրամաբանությունից դուրս: Դրա ազդեցությունը տնտեսության բոլոր ոլորտների վրա հսկայական է, մասշտաբային: Իրականանալուց հետո, հետադարձ հայացքով, դրա ի հայտ գալը համարվում է տրամաբանական, բացատրելի, մատնացույց են արվում իրադարձության իրականանալու հնարավորությունը հիմնավորող նախադրյալները:

«Սև կարապներն» ի հայտ են գալիս մի քանի պատճառով: Նախ.

- հակված լինելով վստահելու իրենց շրջապատում տարածվող տեղեկատվությանն ու հեղինակավոր մարդկանց կարծիքներին՝ մարդիկ

[1] Տե՛ս Черный лебедь. Под знаком непредсказуемости. Нассим Талеб https://www.litres.ru/smart-reading/nassim-taleb-chernyy-lebed-pod-znakom-nepredskazuemosti-samm/chitat-onlayn/

հաճախ անտեսում են դրանց հակասող ամեն ինչ: Սա կոչվում է «պղպջակի էֆեկտ»,

- իրական կյանքում մաթեմատիկական մեթոդների չափից ավելի օգտագործման պատճառով: Գործնականում ամեն ինչ շատ ավելի բարդ է, և պետք է հաշվի առնել նաև այն գործոնները, որոնց մասին մենք չգիտենք,
- մարդը փորձում է կանխատեսել ապագա իրադարձությունները՝ հիմնվելով անցյալի վրա և ենթադրելով, որ իր գիտելիքները բավարար են կանխատեսումներ անելու համար, և որ այս անգամ էլ ամեն ինչ կզարգանա նույն սցենարով:

Աշխատանքի մեթոդական, տեղեկատվական հիմքերը: Քննական ուսումնասիրության են ենթարկվել թեմային առնչվող տեսական բնույթի մասնագիտական հրապարակումները, կիրառվել են ՀՀ տնտեսական վիճակը բնութագրող և առավելապես բնակչության կենսամակարդակին առնչվող վիճակագրական տվյալների դինամիկ վերլուծության և համեմատման մեթոդները: Իրականացվող վերլուծությունների և գնահատումների հիմքում ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ Կառավարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության վիճակագրական տվյալներն են, հետազոտությունները, հրապարակված զեկույցները:

Գրականության ակնարկ: 2004 թ. ամերիկացի տնտեսագետ և մաթեմատիկոս Նասիմ Նիկոլաս Թալեբը «Պատահականությամբ հիմարացվածները»[1] գրքում առաջին անգամ ներկայացրեց «սև կարապ» եզրույթն ու տվեց դրա բացատրությունը՝ հանկարծակի և լայնածավալ երևույթ, որն արմատապես փոխում է պատմության ընթացքը՝ պատերազմ, ֆինանսական ճգնաժամ, ինտերնետի առաջացում և այլն, որոնք, սակայն, հնարավոր չէ կանխատեսել, բայց պետք է պատրաստ լինել ապրելու դրանց հետ ու դրանցից հետո: Փորձագետները[2] «սև կարապ» են համարում 2020 թ. սկզբի իրադարձությունները՝ COVID-19 համաճարակի բռնկումը, դրա թերագնահատման արդյունքում՝ մահացության բարձր մակարդակը, երկրների ու դրանց ազգային տնտեսությունների մեկուսացումը, համաշխարհային ՀՆԱ-ի ծավալի կտրուկ կրճատումն ու տնտեսական աճի տեմպի անկումը: Կորոնավիրուսը ցույց է տալիս համաշխարհային փխրունությունը և պետությունների՝ արդյունավետ և ներդաշնակ գործելու դժվարությունները: «Սև կարապի» թեմային են անդրադարձել բազմաթիվ տեսաբան-հետազոտողներ, որոնց մի մասը հիմնականում քննական ուսումնասիրության է ենթարկել Թալեբի գրքերի առանցքային գաղափարները: Այլ հետազոտողներ փորձել են դրանք դիտարկել տարբեր տեսանկյուններից՝ տարածաշրջանային էկոնոմիկայի[3], փիլիսոփայության, արտաքին քաղաքական որոշումների ընդունման[4] և այլն:

---

[1] https://www.mann-ivanov-ferber.ru/books/paperbook/fooledbyrandomness/, https://www.rulit.me/books/odurachennye-sluchajnostyu-read-194336-1.html

[2] https://moneymakerfactory.ru/spravochnik/chernyiy-lebed-v-ekonomike-i-politike/, https://www.cossa.ru/152/42631/

[3] https://research-journal.org/economical/teoriya-chernogo-lebedya-v-kontekste-regionalnoj-ekonomiki/

[4] https://cyberleninka.ru/article/n/neopredelennost-nelineynost-i-yavlenie-chernogo-lebedya-v-prinyatii-vneshnepoliticheskih-resheniy

Վերլուծություն: ՀՀ տնտեսության համար ևս կորոնավիրուսային համավարակը «սև կարապ» էր, քանի որ անկանխատեսելի էր, փոխեց մեր և աշխարհի փոխհարաբերության ձևերը, մասշտաբային ազդեցություն ունեցավ տնտեսության բոլոր ոլորտների և սոցիալական կյանքի բոլոր բնագավառների վրա, քաղաքական և հասարակական որոշ շրջանակների կողմից հետահայաց ներկայացվեցին դրա բռնկումն ու տարածումը կանխելու քայլերը, մատնանշվեցին հիվանդության դեմ պայքարելու տարատեսակ միջոցառումներ:

ՀՀ տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցությունը խորացավ 44-օրյա պատերազմի բացասական տնտեսական հետևանքներից: Պատերազմը ևս ՀՀ-ի համար «սև կարապ» էր, քանի որ ձևավորված իրողությունները, բանակցային իրավիճակը, միջազգային հանրության ճնշումները, 2016 թ. քառօրյա պատերազմը մեզ ամեն օր մոտեցնում էին Արցախյան 2-րդ պատերազմին, որին պատրաստ չէինք:

2020 թ. ՀՆԱ-ն, նախորդ տարվա համեմատ, նվազեց 7.4%-ով, և գրանցվեց 2009 թվականից հետո ամենամեծ անկումը: Տնտեսության վրա պատերազմի և համավարակի գումարային ազդեցությունը, ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության հաշվարկների, կազմել է շուրջ 916 մլրդ ՀՀ դրամ[1]:



Գծապատկեր 1. ***Իրական ՀՆԱ-ի մակարդակը և տնտեսական աճի տեմպը 2019 և 2020 թվականներին՝ արտահայտված եռամսյակներով***[2]

Համավարակի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա դիտարկենք բնակչության սոցիալական վիճակը բնութագրող որոշ ցուցանիշների փոփոխությունների վերլուծությամբ:

Թեև 2020 թ. առաջին եռամսյակում արտադրված իրական ՀՆԱ-ն դեռևս գերազանցում էր 2019-ի նույն ժամանակաշրջանի ցուցանիշին, այնուամենայնիվ, տնտեսական աճի տեմպը նկատելի ցածր էր, 2-րդ եռամսյակում կորոնավիրուսի ազդեցությամբ տնտեսական իրավիճակի վատթարացումը դարձավ նկատելի, և տնտեսական աճի տեմպը նվազելով կազմեց -13.5%: 2021 թ. 1-ին եռամսյակից սկսած՝ արձանագրվում է տնտեսության վերականգնում, որի արդյունքում 2-րդ եռամսյակում արդեն տնտեսական աճի

[1] https://www.mineconomy.am/media/16379/Report_Covid%20impact.pdf

[2] https://www.armstat.am/am/?nid=202 Եռամսյակային ցուցանիշներ, 2020 թվականի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) եռամսյակային և տարեկան նախնական տվյալները, https://www.armstat.am/file/doc/99523108.pdf

տեմպը կազմում է 13.3%: Բնականաբար, 2020 թ., 2019-ի համեմատ, նկատելիորեն նվազել է մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն՝ գրեթե 330 ԱՄՆ դոլարով:



Գծապատկեր 2. ***ՀՆԱ-ն (ընթացիկ գներով)՝ բնակչության մեկ շնչի հաշվով***[1]

Սկսած 2020 թ. 2-րդ եռամսյակից, ՀՀ դրամով արտահայտված, ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով արդեն նկատելիորեն ցածր է եղել 2019 թ. նույն եռամսյակի ցուցանիշից, անկումը շարունակվել է հաջորդ բոլոր եռամսյակներում, և թեպետ 2020 թ. ամեն հաջորդ եռամսյակում ցուցանիշը գերազանցել է նախորդի նույն ցուցանիշը, այնուամենայնիվ, տարին փակվել է 2019 թ. համեմատությամբ գրեթե 200 հազար ՀՀ դրամով ավելի ցածր ցուցանիշով:

2020 թ. փոփոխություններ են տեղի ունեցել նաև աշխատաշուկայում. զբաղվածների թվաքանակը նվազել է 1.9%-ով կամ 18.8 հազ. մարդով: Հետաքրքիր է, որ 2019 թ. համեմատ ֆորմալ զբաղվածությունը՝ աշխատողների միջին տարեկան թվաքանակը, ավելացել է 4.3%-ով[2]:



Գծապատկեր 3. ***Գործազրկության և զբաղվածության մակարդակները 2019-2020 թթ.***[3]

---

[1] Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) և ՀՆԱ-ն՝ բնակչության մեկ շնչի հաշվով, https://www.armstat.am/am/?nid=202

[2] https://armstat.am/file/article/sv_03_21a_142.pdf, էջ 125

[3] https://armstat.am/file/article/sv_03_21a_141.pdf

2020 թ., 2019-ի նկատմամբ, զբաղվածության մակարդակը նվազել է 1 տոկոսային կետով, իսկ գործազրկության մակարդակը բարձրացել է 0.2 տոկոսային կետով: Հետաքրքրական է, որ 2020 թ. 4-րդ եռամսյակում գործազրկության մակարդակն ավելի ցածր է եղել, քան 2019 թ. նույն եռամսյակում: Կարծում ենք, որ դա պայմանավորված էր երկու հանգամանքով՝ վարչարարության բարելավմամբ և ստվերից դուրս եկած աշխատողների գրանցմամբ ու պետության աջակցության ծրագրերից օգտվելու համար որոշ գործատուների կողմից բոլոր աշխատողների գրանցմամբ: Սրա մասին է վկայում նաև 2020 թ. գործազուրկների թվի կրճատումը 2019-ի նկատմամբ (գծապատկեր 4):

Բնակչության կենսամակարդակի վրա կորոնավիրուսի և պատերազմի ծանր ազդեցությունը երևում է տնային տնտեսությունների սպառողական ծախսերի կտրուկ կրճատմամբ (գծապատկեր 5):



Գծապատկեր 4. ***Աշխատուժի առաջարկը և գործազուրկների թիվը***[1]

2020 թ. 1-4-րդ եռամսյակներում տնային տնտեսությունների վերջնական սպառողական ծախսերը, 2019-ի նույն ժամանակահատվածների նկատմամբ, կազմել են համապատասխանաբար 78.2, 72.9, 98.0 և 95.8%, իսկ տարեկան ցուցանիշը՝ 86.2%, այսինքն՝ 2019 թ. տարեկան ցուցանիշից 2020-ի ցուցանիշը պակաս է եղել ավելի քան 1600 մլրդ ՀՀ դրամով:

2020 թ., 2019-ի համեմատ, տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական ընդամենն ամբողջական եկամուտը ավելացել է գրեթե 9000 ՀՀ դրամով, իսկ անվանական սպառողական ծախսերը նվազել են 520 ՀՀ դրամով: Սա նշանակում է, որ համավարակով և պատերազմով պայմանավորված՝ միայն տնային տնտեսությունների մեկ շնչի հաշվով ամսական ամբողջական պահանջարկը նվազել է շուրջ 9500 ՀՀ դրամով:

Բնականաբար, դա իր բացասական ազդեցությունն է թողել ողջ տնտեսության վրա՝ լրացուցիչ ազդակ հանդիսանալով ՀՆԱ-ի կրճատման համար:

ՀՀ Կառավարությունը, տնտեսական անկումը կանխելու և տնտեսության վերականգնումը խթանելու համար, 2020 թ. մշակել և իրականացրել է սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրեր, որոնց ընդհանուր արժեքը կազմել է ՀՆԱ-ի 2.7%-ը՝ 164.8 մլրդ ՀՀ դրամ[2]:

---

[1] https://armstat.am/file/article/sv_03_21a_141.pdf Աշխատանքի շուկայի ցուցանիշներ:
[2] Տե՛ս ՀՀ Կառավարության 2022 թ. բյուջետային ուղերձ, էջ 80:



Գծապատկեր 5. ***Սպառողական ծախսերը 2019-2020 թթ.***[1]

Եզրակացություն: Եթե մենք միայն սպիտակ կարապներ ենք տեսել, դրանից չի հետևում, որ բոլոր կարապները սպիտակ են: «Սև կարապի» ֆենոմենը ինչ-որ իմաստով արժեզրկում է տնտեսական, քաղաքական և այլ կանխատեսումները, անցյալի դասերը հաշվի առնելու արդյունավետությունը, քանի որ ցանկացած տրենդի փոփոխություն տեղի է ունենում անսպասելի: «Սև կարապի»՝ կյանքի բոլոր ոլորտների վրա ունեցած մասշտաբային ազդեցությունը բացատրվում է այն հանգամանքով, որ արմատապես վերափոխվում են մեր պատկերացումները «իրերի դասավորության» մասին, անվստահությամբ ենք վերաբերվում փորձագիտական գնահատականներին և կանխատեսումներին: Ակնհայտ է, որ բազմաթիվ կանխատեսումներ պարզապես չեն իրականանում, թեև բոլոր նախադրյալներն առկա են լինում: Որքան անհավանական է «սև կարապ» իրադարձությունը, այնքան ուժգին է դրա ազդեցությունն ու ծավալուն-համընդգրկուն են հետևանքները:

«Սև կարապի» հետևանքները հաղթահարելու համար հարկավոր է նախ՝

1. հաշտվել այն մտքի հետ, որ վաղ թե ուշ այն տեղի կունենա,
2. օգտագործել «սև կարապի» ընձեռած հնարավորությունները՝ ուշադրությունը կենտրոնացնելով առավել անսովոր և բացառիկ, անհավանական տարբերակների վրա և առաջարկել անսպասելի գաղափարներ, որոնք թույլ կտան «գերազանցել» բոլորին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Талеб Н. Николас, Одураченные случайностью, https://www.rulit.me/books/odurachennye-sluchajnostyu-read-194336-3.html
2. Талеб Н. Николас, Черный лебедь. Под знаком непредсказуемости, https://mybook.ru/author/nassim-nikolas-taleb/chernyj-lebed-pod-znakom-nepredskazuemosti-sbornik/read/
3. Дудова Т.В., Неопределенность, нелинейность и явление «Черного лебедя» в принятии внешнеполитических решений, https://cyberleninka.ru/article/n/neopredelennost-nelineynost-i-yavlenie-chernogo-lebedya-v-prinyatii-vneshnepoliticheskih-resheniy

[1] https://armstat.am/file/article/poverty_2020_a S/S սպառողական ծախսեր

4. ՀՀ ՎԿ կայք էջ,
https://www.armstat.am/file/article/sv_10_21a_142.pdf
https://www.armstat.am/am/?nid=82&id=2442
https://armstat.am/am/?nid=82&id=2381
5. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն,
https://www.mineconomy.am/media/16379/Report_Covid%20impact.pdf
6. ՀՀ Կառավարության 2022 թ. բյուջետային ուղերձ, Եր., 2021:
7. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-մարտին, https://armstat.am/am/?nid=82&id=2381

ТЕРЕЗА ВАРДАНЯАН
Экономика, бакалавриат, 2-ой курс

ТЕОРИЯ "ЧЕРНОГО ЛЕБЕДЯ" И МАКРОЭКОНОМИЧЕСКОЕ РАЗВИТИЕ РА

Ключевые слова: *«Черный лебедь», непредсказуемое, неожиданное событие, коронавирус, уровень жизни, макроэкономические показатели*

В современном мире мировая экономика все чаще сталкивается с непредсказуемыми явлениями, характеризующимися «крайней редкостью», которые вызывают сильные экономические колебания и тяжелые экономические кризисы. Изначально непредсказуемые для эксперта события, которые ретроспективно создают иллюзию очевидности, объяснимости и ожидаемости, накладывают существенный отпечаток на все показатели, характеризующие макроэкономическую ситуацию. Эти непредсказуемые события описывают явление, известное в профессиональной литературе как «Черный лебедь». Современным примером «Черного лебедя» для мировой экономики является эпидемия COVID-19, разразившаяся в мире в начале 2020 года, а для Армении еще и 44-дневная война.

TEREZA VARDANYAN
Economics, Bachelor's Degree, 2nd Year

"BLACK SWAN" THEORY AND MACROECONOMIC DEVELOPMENTS OF THE REPUBLIC OF ARMENIA

Key words: *“Black Swan”, unpredictable, surprise event, Covid-19, standard of living, macroeconomic indicators.*

In today’s world the economy is more often confronted with unpredictable phenomena characterized as "extreme rareness", which cause strong economic fluctuations and hard economic crises. Initially, unpredictable events for the expert, which, after happening, retrospectively create the illusion of being obvious, explainable and expected are famous with the term "Black Swan". A modern example of "Black Swan" for the world economy is COVID-19, which has broken out since 2019. And in the case of Armenia it was also the Nagorno-Karabakh war.